ԵՂԵՌՆԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՂ ԿԱՐԵՒՈՐ ԳԻՐՔ

Posted on December 26, 2011 by Keghart



Category: Opinions

Սամուէլ Մուրադեան, Բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, Երեւանի պետական համալսարանի հայ գրականութեան ամբիոնի վարիչ, 2011

> ***Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնը վերահաստատող այս գիրքը կ'ունենայ յաղթաթղթի նշանակութիւն, ուրեմն այն արագօրէն պէտք է թարգմանուի տարբեր լեզուներով եւ դրուի օտար ընթերցողի սեղանին:***

Մօտենում է մեր ժողովրդի ծանրագոյն ողբերգութեան՝ թուրքերի գործադրած հայոց Մեծ Եղեռնի 100-ամեակը: Պաշտօնական Թուրքիան, որ քաղաքակիրթ ու ժողովրդավար երեւալու միտումով իր իսկ դատարանով հէնց թուրք ոճրագործներին 1919 թուականին հեռակայ մահուան էր դատապարտել հայոց Մեծ Եղեռնը կազմակերպելու եւ գործադրելու համար, այնուհետեւ "հերոսացրեց" նրանց ու գրեթէ մէկ դար ամէն ճիգ գործադրում է որպէսզի հերքի կամ արդարացնի գործադրուած ցեղասպանութիւնը՝ մարդկութեան դէմ գործած զարհուրելի մի յանցանք, որի իմաստը եւ անգամ հայերէն արտասանութիւնը նոյնիսկ Ա. Մ. Ն.ի նախագահ Բարաք Օբաման գիտի: Սահմռկեցուցիչ այդ եզրոյթի նշանակութիւնը աշխարհացիր հայութիւնը գիտակցում է իր ծանրագոյն կորուստներով՝ միլիոնաւոր անմեղ զոհերով, անարդար պատերազմով եւ գերտէրութիւնների թողտուութեամբ թուրքերի բռնազաւթած պատմական հայրենիքի կորստով:

Սամուէլ Մուրադեան, Բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, Երեւանի պետական համալսարանի հայ գրականութեան ամբիոնի վարիչ, 2011

> ***Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնը վերահաստատող այս գիրքը կ'ունենայ յաղթաթղթի նշանակութիւն, ուրեմն այն արագօրէն պէտք է թարգմանուի տարբեր լեզուներով եւ դրուի օտար ընթերցողի սեղանին:***

Մօտենում է մեր ժողովրդի ծանրագոյն ողբերգութեան՝ թուրքերի գործադրած հայոց Մեծ Եղեռնի 100-ամեակը: Պաշտօնական Թուրքիան, որ քաղաքակիրթ ու ժողովրդավար երեւալու միտումով իր իսկ դատարանով հէնց թուրք ոճրագործներին 1919 թուականին հեռակայ մահուան էր դատապարտել հայոց Մեծ Եղեռնը կազմակերպելու եւ գործադրելու համար, այնուհետեւ "հերոսացրեց" նրանց ու գրեթէ մէկ դար ամէն ճիգ գործադրում է որպէսզի հերքի կամ արդարացնի գործադրուած ցեղասպանութիւնը՝ մարդկութեան դէմ գործած զարհուրելի մի յանցանք, որի իմաստը

եւ անգամ հայերէն արտասանութիւնը նոյնիսկ Ա. Մ. Ն.ի նախագահ Բարաք Օբաման գիտի: Սահմռկեցուցիչ այդ եզրոյթի նշանակութիւնը աշխարհացիր հայութիւնը գիտակցում է իր ծանրագոյն կորուստներով՝ միլիոնաւոր անմեղ զոհերով, անարդար պատերազմով եւ գերտէրութիւնների թողտուութեամբ թուրքերի բռնազաւթած պատմական հայրենիքի կորստով:

Թուրքերն էլ են հասկանում. նախնիները՝ հասկանալով եւ կազմակերպուած, թուրք-քրդական համերաշխութեամբ, հրէական ծագումով եւ հոգեւոր ու մտաւորական առաջնորդներով, գերմանազէն բանակներով ու սպաներով, ջարդարար վոհմակներով են գործել, ներկաներն էլ, հետեւանքները հասկանալով, ոգի ի բռին ջանում են հերքել իրողութիւնը՝ գործադրելով իրենց պետական քարոզչական մեքենան, հրաժարուելով հայութեան հետ առերեսումից ու երկխօսութիւնից: Տարածաշրջանում հաշտութեան ու խաղաղութեան հաստատման մէջ մեծ դերակատարութիւն ստանձնելու հովեր առած թուրքական վարչակարգը, միմիայն իր տնտեսական ու քաղաքական շահերով ու պանթիւրքիստական հեռահար նպատակներով առաջնորդուելով, ճգնում է ապակողմնորոշել ողջ մարդկութեանը ու նաեւ իր երկրի ազգաբնակչութեանը:

Բայց ահա թուրք մտաւորականութիւնը ճեղքեր է տալիս, որովհետեւ այլեւս անհնար է լռեցնել պատմական ճշմարտութեան ձայնը: Հէնց թուրքերէնով եւ այլ լեզուներով Օրհան Փամուկը, Քեմալ Եալչընը, Ֆեթհիյէ Չեթինը, ցեղասպանագէտ Թանէր Աքչամը եւ ուրիշ մտաւորականներ՝ Թուրքիայի քաղաքացի կամ ճշմարտախօսութեան համար այնտեղից վտարուած, թէեւ ոչ ամբողջութեամբ, քայլ առ քայլ բացում են հարիւրամեայ վարագոյրը եւ մարդկութեանը ցոյց տալիս շուրջ 100 տարի սքօղուած ողբերգութիւնը: Հայոց Ցեղասպանութեան համաշխարհային ճանաչման գործընթացը շարունակւում է. երկու տասնեակ պետութիւններ ի հեճուկս Թուրքիայի ճանաչել են այն ու դատապարտել:

Թուրքիայի հետ միասին դեռեւս լռում են նրա հետ աշխարհաքաղաքական շահերով կապուած ու նրան յանցակից պետութիւնները: Սակայն նորանկախ Հայաստանի Հանրապետութեան նախաձեռնած գործընթացն անկասելի ու անշրջելի է. այն շարժւում է մի ճանապարհով, որը, հասկանալի է՝ ուր է տանում: Այդ ճանապարհի խոչընդոտները յաղթահարւում են հայութեան միացեալ ջանքերով:

Ազգանուէր այդ գործում իր կարեւոր ներդրումն ունի լիբանանցի մեր հայրենակից Յարութիւն Իսկահատեանը՝ մասնագիտութեամբ՝ երկրաչափ՝ Բէյրութի ամերիկեան համալսարանից վկայուած: Նա էլ Գրիգոր Զօհրապի պէս ունի գրական հակումներ, ամբողջ կեանքում զբաղուել է հայոց պատմութեան, Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիայի, միւս հայկական բնօրրանների եւ Հայոց Ցեղասպանութեան խնդիրներով: 2010-ի ամառնավերջին ստանալով նրա կազմած “Վկայարան Հայկական Ցեղասպանութեան” գրքի Ա հատորը, Երեւանում՝ Հայաստանի Ազգային

գրադարանում մասնակցեցի նրա շնորհանդէսին: Ինձ համար արդէն պարզ էին այդ գրքի արժէքն ու օգտակարութիւնը, եւ ես դա ընդգծեցի իմ ելոյթում: Նախապէս չէի պայմանաւորուել բանախօսներից որեւէ մէկի հետ, եւ անկեղծօրէն ուրախացայ, որ բոլորս էլ համակարծիք էինք, եւ բոլորս էլ ուրախացանք, որ արդէն տպագրութեան է պատրաստ Բ հատորը:

Այս երկու հատորները հայոց եղեռնապատումի գրականութեան մէջ ունեն իրենց առանձնայատուկ տեղը, եւ նրանց վիճակուած է պատմագործառական որոշակի դեր: Նրանցում համառօտուելով ընդգրկուած են այնպիսի նիւթեր, որոնք աներկբայ են դարձնում ոչ միայն 1894-1923 թթ. պարբերական ջարդերի ու Մեծ Եղեռնի իրական լինելը, այլեւ պատկերացում են տալիս նախաեղեռնեան եւ յետեղեռնեան շրջափուլերի մասին:

Գաղտնիք չէ, որ սփիւռքահայութիւնը ազատ մամուլ եւ գրականութիւն ընթերցելով, աւելի էր տեղեակ հայոց Մեծ Եղեռնին, գիտէր աւելի շատ, քան Խորհրդային Հայաստանի հայութիւնը, որովհետեւ մինչեւ 1960-ականների կէսերը նրանից հետեւողականօրէն թաքցւում էր պատմական բուն ճշմարտութիւնը եւ խստօրէն պատժւում էին մանաւանդ Ցեղասպանութեան ու հայոց պահանջատիրութեան մասին բարձրաձայնողները:

Մեծ Եղեռնի ժամանակներում եւ նրանից յետոյ այդ ողբերգութեան մասին հրատարակուել են հարիւրաւոր գրքեր՝ աշխարհի տարբեր լեզուներով: Որեւէ անհատ՝ ամբողջ այդ գրականութեանը իր ապրած երկրում չլինելու, արգելուած կամ օտարալեզու լինելու, ժամանակ եւ հնարաւորութիւն չունենալու եւ տարբեր այլ պատճառներով չէր կարող եւ չի էլ կարողանայ ընթերցելով ծանօթ լինել, եթէ չունի մասնագիտական յատուկ նպատակադրում: Լաւագոյն դէպքում կարող է ծանօթ լինել միայն որոշ մատչելի գրքերի, որոնք, որքան էլ հաւաստի, չեն կարող ապահովել 20-րդ դարի առաջին եւ աննախադէպ մեծ ոճրագործութեան մասին ամբողջական պատկերացում: Իսկ Հայոց Ցեղասպանութեան մասին տարբեր գրքերում, մամուլում եւ արխիւներում ցրուած տեղեկութիւնները միայն յատուկ մասնագէտների հետաքրքրութեան համար են սահմանուած եւ չեն դառնում հանրութեան սեփականութիւն: Սա մի իրողութիւն է, որ ստոյգ գիտակցել է Յ. Իսկահատեանը եւ ձեռնարկել բոլոր գրքերում՝ հայերէն, անգլերէն, ֆրանսերէն, թուրքերէն, արաբերէն եւ այլն, Եղեռնի մասին եղած նիւթերը՝ ականատեսների վկայութիւններ, ողբերգութիւնը կրողների յիշողութիւններ, գեղարուեստավաւերական պատումներ եւ այլն, գոնէ շատ համառօտ, քաղուածաբար կամ վերապատմումով ընթերցողին ներկայացնելու կարեւոր գործը:
Հսկայածաւալ ամբողջ գրականութեանը ծանօթանալու հնարաւորութիւնից զուրկ ընթերցողը գոնէ այս գրքի հատորներով մօտաւոր պատկերացում կ’ունենայ

կատարուած ողբերգական իրադարձութիւնների մասին, որ այնքան անամօթ եղանակներով հերքում կամ նենգափոխում են թուրք ազգայնամոլները յետեղեռնեան շրջանում, երբ իւրացնում կամ ոչնչացնում են բռնազաւթած տարածքների բնական հարստութիւնները, հայերի ստեղծած պատմամշակութային արժէքները, փոխում-թրքացնում են հազարամեակներով գոյատեւած տեղանունները եւ իրենց վերագրում հնագոյն քաղաքակրթութեան նուաճումները:

Յ.Իսկահատեանի այս հատորներն ունեն մի այլ առաւելութիւն, յաճախ միեւնոյն դէպքերի կամ դէմքերի մասին բերւում են տարբեր ականատեսների վկայութիւններից կամ յիշողութիւններից դրուագներ, որոնք իրարից անկախ, բայց միասնական վերաբերմունքով դառնում են կատարուածի վաւերականութեան անհերքելի հաստատումներ: Նկատել ենք, որ Վահան Մինախորեանի “1915” յուշագրութեան մէջ պատկերուած է Սամսոնի մի բարեկեցիկ հայ ընտանիքի բռնագաղթը, իսկ այդ նոյն ընտանիքի մասին, Մինախորեանից բոլորովին անկախ, տեղեկութիւններ է հաղորդում Դէր-Զօրում նրա թշուառութեանն ականատես Երուանդ Օտեանն իր “Անիծեալ տարիներ” յուշագրութեան էջերում:

Այս հատորներում էլ թուրք ու քուրդ ջարդարարների դէմ Վասպուրականի, Սասունի, Մուշի, Շապին Գարահիսարի, Ուրֆայի, Հաճընի հերոսամարտերի, ինչպէս եւ Արեւմտեան Հայաստանի բոլոր բնակավայրերում պետականօրէն կազմակերպուած վայրագ ու անողորմ կոտորածների, որբանոցների վրայ յարձակումների, հայերի բռնի իսլամացման, թրքացման ու քրդացման, բռնագաղթի վերաբերեալ կողք կողքի դրուած են հայ եւ օտար տարբեր ականատեսների վկայութիւններ, որոնք գրեթէ բառացիօրէն համընկնում են: Ինչ խօսք, սրա՜նք են պատմական ճշմարտութիւնը եւ ոչ թէ պանթիւրքիստ ծայրայեղ ազգայնամոլներ Զիա Գէօքալփի, Մեհմէթ Էմինի, Խալիդէ Էդիպ Ադը-վարի, Աքա Գիւնդիւզի եւ ուրիշների ստայօդ յերիւրանքները, որոնցով հայերի ու միւս “գեաւուրների” հանդէպ ատելութեան ու ջիհադի կոչեր էին հնչեցնում մոլեռանդ ամբոխի մէջ ու բորբոքում նրա վայրենի բնազդները:

Միանգամայն արդարացուած է Յ. Իսկահատեանի մօտեցումը եղեռնապատումի վիթխարածաւալ գրականութեանը. նա գերազանցապէս կենտրոնացել է ականատեսների յուշագրութիւնների վրայ եւ խելամտօրէն չի շրջանցել գեղարուեստական այն պատումները, որոնք ունեն վաւերագրական-փաստագրական արժէք: Չէ՞ որ գեղարուեստական պատումի հիմքում էլ նոյն դաժան ու սահմռկեցուցիչ իրականութիւնն է: Ընդունելի է եւ նիւթերի ներկայացման կերպը. տրւում են մատենագիտական ճշգրիտ տեղեկութիւններ՝ հեղինակի եւ գրքի անուանումը, հրատարակութեան վայրը եւ տարեթիւը, էջերի քանակը եւ չափը: Հեղինակի ինքնութեան, նրա ծննդավայրի վերաբերեալ կարճառօտ տեղեկութիւններով սկսելով իւրաքանչիւր գրքի ներկայացում՝ այնուհետեւ մատնանշում է ցեղասպանութեան

վկայութիւնները:

Ա հատորն ընդգրկում է աւելի քան 90 գիրք եւ գրքոյկ, իսկ, Բը՝ շուրջ 55: Գիրքը՝ իր երկու հատորներով, մի իւրօրինակ տեղեկատու-ուղեցոյց է հայոց եղեռնապատումի գրականութեան, քանի որ մասնաւոր հետաքրքրուողը նրանով կարող է կողմնորոշուել եւ ծանօթանալ ուզած գրքին ամբողջութեամբ:

Ճիշտ է, որ հարիւր յիսունի փոխարէն երկու հատոր կարդալով՝ լիակատար չի լինի հայոց Մեծ Ողբերգութեան, թուրքի էութեան, նրա իւրացումների եւ ուրացումների մասին պատկերացումը, սակայն Յ. Իսկահատեանը յաջողել է ստեղծել Հայոց Ցեղասպանութեան վաւերական ու հանրամատչելի փաստառատ պատմութիւնը, որը պիտի դառնայ Հայաստանում եւ արտերկրում ապրող իւրաքանչիւր հայի սեփականութիւնը: Աւելին. թուրքական ուրացումների դէմ, ներկայ տեղեկատուական պատերազմում եւ Մեծ Եղեռնի միջազգային ճանաչման գործընթացում Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնը վերահաստատող այս գիրքը կ’ունենայ յաղթաթղթի նշանակութիւն, ուրեմն այն արագօրէն պէտք է թարգմանուի տարբեր լեզուներով եւ դրուի օտար ընթերցողի սեղանին: